# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
# ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, գ.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 ՕԳՈՍՏՈՍԻ 2020թվականի N 170Ա

### ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 1.2-1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 46-րդ հոդվածի 1-ին կետով,«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-դ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 13.08.2020 թվականի թիվ ՍՊ//23097-2020 հանձնարարականի պահանջները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ղեկավարի 12 հունվարի 2018թ. թիվ 2-Ա որոշման N1 հավելվածով հաստատված համայքապետարանի աշխատակազմի քարտուղարի(ծածկագիր՝ 1.2-1) համայնքային ծառայության պաշտոնի անձնագրում կատարելլրացում՝<< ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ>> մասի 11-րդ կետը լրացնել ծ/ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ՝

ծ/ 1. Բարեվարքության հարցերով կազմակերպիչը՝

1)համայնքային ծառայողներին տրամադրում է անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների,
վարքագծի կանոնների վերաբերյալ մասնագիտական խորհրդատվություն,
ներկայացնում շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված քայլեր ձեռնարկելու
վերաբերյալ առաջարկություն.

2)իրականացնում է բարեվարքության հարցերով վերապատրաստման կարիքների
 բացահայտում և վերապատրաստման ծրագրերի,
ինչպես նաև բարեվարքության պահանջների պահպանմանն ուղղված այլ
ծրագրերի մշակում.

3)համայնքի ղեկավարի,
էթիկայի հանձնաժողովի պահանջով կամ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողո
վի առաջարկով կատարում է բարեվարքության համակարգին առնչվող
ուսումնասիրություններ.

4)մշակում է համայնքային ծառայողների բարեվարքության պլանների նախագծերը,
դրանք ներկայացնում տվյալ մարմնում հաստատման.

5)վարում է համայնքային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների,
այլ սահմանափակումների,
վարքագծի կանոնների խախտումների և շահերի բախման դեպքերի վիճակագրություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2020 թ. օգոստոսի 18

ք. Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

18-Ը ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 171 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂԵԳԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թ. մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով

*որոշում եմ*

Տալ շինարարության թույլտվություն << ԱՐ ԱՐ ՖԱՐՄ>> ՍՊԸ-ին Եղեգիս բնակավայրի կենտրոնական փողոց 1 փկղ 1 հասցեում գտնվող սեփական հողամասի վրա /կադաստրային ծածկագիր՝ 10-021-0114-0069, մակերեսը՝ 0.1008 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության/՝ Խելացի անասնաշենքի և կից կթման սրահի կառուցման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2020 թ.օգոստոսի 18
ի.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

20-Ը ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 172 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 11-Ը ՀՈՒՆԻՍԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 113Ա ՈՐՈՇՄԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՇԱՐԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3)-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով

*որոշում եմ՝*

Եղեգիս համայնքի ղեկավարի 11-ը հունիսի 2020 թ. «Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող հողատեսքերը առանձին միավոր գրանցելու մասին» թիվ 113Ա որոշման բովանդակությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. <<Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող հետևյալ հողերը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն՝ գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0127- , մակերեսը՝ 0,35993հա>>:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2020 թ.օգոստոսի 20
ք.Եղեգիս

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, p.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

20-Ը ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 173 Ա

### ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՂԹԱՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի պահանջներով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 43-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով

*որոշում եմ՝*

1.Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող հետևյալ հողերը գրանցել որպես առանձին միավոր համայնքային սեփականություն՝

- գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0548- , մակերեսը՝ 0.00806 հա,
- գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0548-001-ից , մակերեսը՝ 0,0192հա,
- գյուղատնտեսական նշանակության վարելահող հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0146, մակերեսը՝ 0.0683հա,
- գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0548-001-ից , մակերեսը՝ 0,0017հա,
- գյուղատնտեսական նշանակության վարելահող /մակերեսը՝0.1894հա/ և այլ /մակերեսը՝0.1676հա/հողատեսքեր, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0148, 550 , մակերեսը՝ 0,3570հա,
- ջրային նշանակության ջրային հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0548-ից, մակերեսը՝ 0,0366հա,
- գյուղատնտեսական նշանակության այլ /մակերեսը՝1.20604հա/ և խոտհարք /մակերեսը՝0.47256հա/հողատեսքեր, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0550, 0105, 0506, 0123, 0503, 0120, 0502, 0119, 0548, մակերեսը՝ 1,6786հա:

2.Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող հետևյալ հողերը գրանցել որպես առանձին միավոր պետական սեփականություն՝

- ջրային նշանակության ջրային հողատեսք, կադաստրային ծածկագիր՝ 10-018-0550-ից, մակերեսը՝ 0,0147հա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2020 թ.օգոստոսի 20
ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
22, Վայոց Ձորի մարզ, բ.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

20-Ը ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 174 Ա

ԳՈՂԹԱՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշումը

*որոշում եմ՝*

Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող ջրային նշանակության ջրային հողատեսքին /կադաստրային ծածկագիր՝ 10-018-0550-ից, մակերեսը՝ 0,0147հա / տրամադրել Եղեգիս համայնք, Գողթանիկ բնակավայր, 12-րդ փողոց, թիվ 15/1 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2020 թ.օգոստոսի 20
հ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բ.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

20-Ը ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 175 Ա

ԳՈՂԹԱՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ, 24-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշումը

*որոշում եմ՝*

Եղեգիս համայնքի Գողթանիկ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող ջրային նշանակության ջրային հողատեսքին /կադաստրային ծածկագիր՝ 10-018-0548-ից, մակերեսը՝ 0,0366հա/ տրամադրել Եղեգիս համայնք, Գողթանիկ բնակավայր, 3-րդ փողոց, թիվ 19/1 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2020 թ.օգոստոսի 20
ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

*Ո Ր Ո Շ ՈՒ Մ*

21-Ը ՕԳՈՍՏՈՍԻ 2020 թվականի N 176 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՐՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԿԱՌԼԵՆ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ 81,4 Ք/Մ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՛Տեղական ինքնակառավարման մասին՛ Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 26/12/2002թ. ՛Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի իրավական կարգավիճակի մասին՛ ՀՕ-510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով

*որոշում եմ՝*

1.Ճանաչել քաղաքացի Կառլեն Վաղարշակի Ստեփանյանի կողմից Եղեգիս համայնքի Հորս բնակավայրի վարչական սահմաններում գտնվող փաստացի ավել օգտագործվող 81,4 ք/մ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը:

2.Ավել օգտագործվող 81,4ք/մ բնակավայրերի նշանակության հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, և այդ իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

2020 թ.օգոստոսի 21
ք.Եղեգիս